

Շնչասպառ, քրտնաթոր՝ Այգեստանցի զինուորները կը վագեն, կը թռչին ու կ'երգեն: Ահա կը մօտենան: Մենք ալ խելագարօրէն դէպի անոնք կ'երթանք թափով: Դեռ իրար չհասած, ճչացինք փոխադարձ թեւատարած — Շիրի՛ն, Փանո՛ս, Գէո՛րգ, Մեղքիսէ՛թ...

Մի բողբէս, ու ասհա արտասուքի եւ յաղթանակի անխառն բերկրանքով միմիանց ողջագուրեցինք: Բառ եւ խօսք չկար բացատրուելու, խօսելու... Համբոյրներ, ջերմ գրկախառնում եւ կուրծքերու յուզումնալից թրթռում...

— Ուռու՛, կեցցէ՛ք հերոսներ, կեցցէ Այգեստանը, — դռնէնք մենք:

— Ուռու՛ Քաղաքամիջին, յաղթանակող քաջերին, — փոխադարձեցին անոնք:

Ցնծութեան, երգի թափօր-դնացրով մըտանք Քաղաքամէջ: Մտրոջ ժողովուրդը՝ կին, երեխայ, հարիւրներով դուրս փողոց թափուած, բերկրանքով կը դիտէին:

Առաջնորդարան հասնելով, կանաչ պարտէզին մէջ, ծաղկած ծառերու տակ պատրաստուած նստարաններու վրայ նստանք: Իսկ մեր շուրջը հետաքրքիր բազմութիւնը հետդհետէ կը ստուարանար: Սօսք առնելով պ. Փանոս Թէրլէմէզեանը ըսաւ. —

«Ողջո՛յն քաղաքացի հերոս ժողովրդին, պարծանք բոլոր կոռուղներուն, որոնք խիզախօրէն կուրծք տուին թշնամուն եւ յաղթանակեցին: Մենք բերեր ենք ձեզ Այգեստանցի ձեր զինակից ընկերներու համբոյրներն ու հիացմունքը: Երկու տեղն ալ փառքով յաղթանակեցինք. թշնամին անզօր ու խայտառակուած փախաւ: Ռուսական բանակը կամաւորներու առաջնորդութեամբ, կ'իմանանք որ, մտած է Բերկրի. յայտնի չէ՝ ե՞րբ անոնք կը հասնին քաղաք. դուցէ դեռ ուշանան: Մենք առանց սպասելու, դեռ ծանր պատասխանատուութեան եւ պարտականութեան առաջ կը զբանըւինք: Զխորհուի թէ՛ զէնքը վար պէտք է դրնել: Ո՛չ: Այժմ աւելի քան առաջ պատրաստ պէտք է գտնուինք հաւանական բոլոր անակընկալներու հանդէպ: Փախչող թշնամին հեռու չէ, կարող է վերադարձի եւ յարձակման փորձեր ընել»...

Ապա սկսուեցան երկար եւ տաք խօսակ-

ցութիւններ: Այդ միջոցին փոխադարձ առաջարկութիւններ եղան խմելու անպարտելի Այգեստանի եւ Քաղաքամիջին թէ՛ ժողովրդի եւ թէ՛ կոռուղներու կենացը: Անուշահամ խմիչքներով հիւրասիրուեցան Այգեստանէն եկող առաջին զինուոր-ընկերները անխտիր:

Ի յարգանս մեր հիւրերուն, խումբ մը զինուորներով զնացինք կրկին բարձրանալու բերդը, այս անգամ անցնելով թուրքարնակ թաղերէն: Առաջանալով՝ ճանապարհին բռնեցինք քանի մը տասնեակ թուրք կին, երեխայ եւ տղամարդ, որ հսկողութեամբ Շտապ զրկեցինք: Արեւմտեան կողմէ բարձրանալով բերդը՝ անմիջապէս հոն հաստատեցինք ժամանակաւոր հսկողութիւն: Մի առ մի այցելեցինք բոլոր շէնքերը եւ ռազմամթերքի պահեստները: Գրեթէ կանոնաւոր հրացաններ չէին մնացեր, եղածներն ալ ջարդ ու փշուր վիճակի մէջ կը գտնուէին: Առատութեամբ կը մնային փամփուշտներ, կապար եւ վառօղ անհատնում: Բերդի վրայ կը մնային 3 թնդանօթներ, եւ 2 հաւան թօփի, որոնցմով անգաղար կը ռմբակոծէին քաղաքը:

Վանի բերդը հայ ժողովրդի ձեռքը... Որքա՛ն հպարտութիւն կը զգայինք այդ վայրկեանին ամէնքս: Հայրենի-պատմական այդ ժայռաքարը, որ երբեմն եղած էր Շամիրամեան շրջանի կոթող, Արծրունի իշխաններու եւ թագաւորներու ամրոցը փառաւոր յիշատակարան-մնացորդներով, տեսեր էր Լէնկթիմուրի դիակակոյտերը եւ Օսմանեան 400 տարուայ իշխանութեան տակ կքեր էր, — այսօր ասհա անօրինակ ցնծութեան ու յաղթանակի թափօրով վերակենդանացած իր թեւերուն կը կրէր իր հարազատ զինուոր որդիները: Զորս դարէ ի վեր անոր կատարին դամուած անհարազատ դրօշը իր որդոց ձեռքով փոխանուեցաւ հայկական ազատագրումի կարմիր դրօշակով, Հ. Յ. Դ. Քաղաքամիջին մարմնի դրօշով: Բայց փասո՛ս, կարճ, շատ կարճ ապրեցանք այդ կեանքը...

ՎԵՐՁԱՅԱՆ

1915 թ. Մայիս 7-ի ցերեկը Վան պիտի մտնէին հայ կամաւորներու խումբերը երկու թեւերով. վարի Թիմարէն Համազասպն եւ Դրօն, վերի Թիմարէն Արճակով՝ Բեռին եւ